№ 194 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4 № 194

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Օգոստոսի 30-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց տաղանդաւոր վիպագիր

Գրիգոր Տէր-Յովհաննիսեան–ՄՈՒՐԱՑԱՆԸ

Թաղումը տեղի կունենայ կիրակի, ամսիս 7-ին։ Ժամը 10 ին հանգուցեալի մարմինը Միքայէլեան հիւանդանոցի մատուռից կը փոխադրվի Վանքի մայր եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։

Կարգադրիչ Յանձնաժողով

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Սեպտեմբերի 4 ին նշանակված Դաւիդովների համերգը Զ. Ա. Դաւիդովայի հիւանդութեան պատճառով յետաձգվում է ցնոր յայտարարութիւն։

Դրա փոխարէն այսօր տեղի կունենայ

Ընտանեկան երեկոյ

Կը նուագեն սազանդարներ։

Հիւրերը՝ պ. պ. անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են 1 ր։

(ա.) 1—1

Շուշու Թեմակ. Դպրոցի
—) համար (—
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
1) բարձրագոյն կրթութեամբ
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
մաթեմատիկայի 24 դասի համար, ռոճիկ 1200 ռուբլի։
2) ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
բարձր դասարան. հայերէնի և գրականութեան 17 դասի համար, ռոճիկ 1000 ռուբլի։ Հեռագրով դիմել տեսուչ Աւետիք Տէր-Պօղոսեանին, Շուշի։
(տո., ա. օ., ապ.) 4—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ
(Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Կատարվում է ՀԱԿԱԽՕԼԵՐԱՅԻՆ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆ 9—2 ժ. առ.
և 5½—7 ժ. եր.
Վճար իւրաքանչիւր պատուաստման համար 1 ր. 50 կ.։
(առ.) (օ. մ.) 15—9

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԴԱՍԱՏՈՒՆ
ԴԱՇՆԱՄՈՒՐԻ
ազատ գեղարուեստագէտ
ՏԵՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
Елизаветинская, № 40.
Ուսման վճարը՝ տարեկան 60 ր., ստացվում է կիսամեակներով—սեպտեմբերին և յունվարին։
(առ.) ա. օ. 10—6

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԴԱՍԱԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Նախապատմական մարդը
—) և (—
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ
25 պատկերով և 2 գունաւոր մեծ քարտէզով։
III բաժանմունքի դասընթացք
Յատկապէս պատրաստված 1906 թ. հայոց ծխական դպրոցների համար մշակված ծրագրի համաձայն։
Կազմեցին
Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ և Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ
Դիմել «Գուտտենբերգ» գրավաճառանոցին կամ կազմողներին՝ Тифлисъ, Сурпъ-Нишанское училище.
(2 ա. Լ.) 10—2

ՍԱՐԻՂԱՄԻՇԻ
Երկսեռ ծխական դպրոցի (չորս բաժ.) համար հարկաւոր է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
700 ռուբլի ռոճիկով
— և երեք —
ՈՒՍՈՒՑԻՉ
ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ
Ցանկացողները կարող են առաջարկել իրանց պայմանների և մասնագիտութեան մասին գրութիւն հոգաբարձութեանը։
Նախագահ հոգ. Գ. ք. Ստամբոլցեան
(ե. հ.) առ. 2—2

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Ի ՏՐԱՊԻԶՈՆ
Առաջիկայ հ. տ. սեպտեմբերի 15-ին պիտի սկսի հաստատութեանս 23 երորդ տարեշրջանը՝ տոհմային արդի պահանջներու յարմար ծրագրով, որ հայ մանուկին մէջ գործի մարդը պատրաստելու կոչումն ունի։ Լեզուական ու գիտական կարևոր ճիւղերու հետ՝ պիտի աւանդուի վաճառականութեան գործնական շահաւէտ դասընթացքն ալ, ասոր հետ լրացուցիչ յաւելուածով նորակառոյց Առևտրատուն մը՝ որուն գործունէութեանց պիտի մասնակցին արժանիք ցուցադրող սաները։
Գիշերօթիկներու տարեթոշակն է լ. օսմ. 15, երկու անգամով վճարելի, դպրոցական մուտքին և հ. տ. փետրվարի առաջին օրերուն։
Մանրամասնութեանց տեղեկանալ ուզողները կը խնդրուի դիմել մեր հասցէին։
Հ. Թ. ԹՈՄԱՃԵԱՆ
վերատեսուչ
(ա.) (ու. Ն. հ.) 3—3

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

(Սեփ. Թղթակ.)

Կ. Պոլիս, 16/29 օգոստոսի

Երէկ ես առիթ ունեցայ տեսնելու Նոր Թիւրքիայի «սահմանադրական միապետին», Ելդըզօնի «կարմիր մարդուն», սէլամլըքի ժամանակ։ Ելդըզի հրապարակի շուրջը ժողովրդի ահագին բազմութիւն և հարիւրաւոր կառք էր հաւաքվել։ Ես բաւական մօտ էի և մտիկ էի տալիս իմ կառքի վերայից, կանգնած, ինչպէս շատ շատերը։ Ժողովրդի և կառքերի առջևը կանգնած էր զօրքը։ Զինուորական փողը հնչելուց յետոյ ուղիղ 12½-ին բազմաթիւ զինուորական և քաղաքացիական բարձր պաշտօնեաների ուղեկցութեամբ, որոնք բոլորն էլ հետիոտն էին, սուլթան Համիդ բաց կառքի մէջ նստած դուրս եկաւ Ելդըզի պալատի դռնից ու գնաց իր կառուցած շքեղ մզկիթը։ Տարածութիւնը շատ փոքր է, հազիւ այնչափ՝ որչափ Թիֆլիսում Երևանեան հրապարակից մինչև Փոխարքայի պալատը։ Կառքում նրա դիմաց նստած էր սադրազամ Քեամիլ փաշա։ Սուլթանը դաժան դէմք ունէր, ալեխառն մօրուք և արծուի մեծ քիթ. նա գունատ էր։ Զօրքն և ժողովուրդը աղաղակում էին՝ «փադիշահըմ չօք եաշա», և նա մի քանի անգամ աջ ու ձախ մտիկ տալով ձեռքով ողջունում էր։ Մօտ կէս ժամ մնաց նա մզկիթում և ապա նոյն հանդիսով ետ դարձաւ. այս անգամ իր սիրելի որդի Բուրհանէդդինն էր, մի երկարահասակ և նիհար երիտասարդ, իր հետն էր, Քեամիլ-փաշայի քով բազմած։ Սուլթանի կառքը գնում էր շատ դանդաղ, որպէսզի հնարաւորութիւն տար ամենքին տեսնելու երէկվայ վայրագ բռնապետ և այսօրվայ առերևոյթ գառնուկ դարձած այդ տարօրինակ մարդուն։

Ես գտնվում էի շատ մօտ այն տեղին, ուր 2 տարի առաջ մի յայտնի կուսակցութեան և բելգիացի անարխիստ Ժօրիսի՝ դժոխային մեքենայ կրող կառքն էր կանգնած… Մինչև հիմա դեռ մնում է մի փոս այնտեղ, ուր պայթել է դժոխային մեքենան, բայց բուն հրապարակը երկաթէ վանդակի մէջ է և այնտեղ՝ այն թւականից յետոյ՝ մուտքը արգելված է և միշտ զօրք է կանգնում։

Սահմանադրութեան հրատարակումով ազատութիւն գտան ոչ միայն սուլթանի հպատակները, նրա երէկվայ գերիները, որոնց վրա կեանքի և մահվան անպայման իշխանութիւն ունէր նա, այլ և իր եղբայրները, որդիքը և առհասարակ արքայական տան իշխանները։ Այս խեղճերը նոյնպէս դժբաղդ էին և մշտական սարսափի տակ. Նրանցից ոչ մէկը իրաւունք չունէր ազատօրէն տանից դուրս գալու. Նրանք ևս շրջապատված էին բազմաթիւ լրտեսներով։ Գահաժառանգ Ռէշադ էֆենդու մօտ, որ սուլթանի եղբայրն է, 11 լրտես կան եղել, և լրագիրները հաղորդում են, թէ հազիւ մէկ շաբաթ առաջ դրանց արձակել են։ Այդ արքայական իշխանները կարող էին կին ունենալ, որքան կամենային, բայց արտաքին աշխարհի հետ յարաբերութիւն—երբէք։ Նրանց ապրուստի համար, իւրաքանչիւրին օրական մէկ ոչխար, շաբաթը 60 հաւ և այլ ուտեստեղէն գնում էր սուլթանի պալատից, բայց կանխիկ փող բոլորովին չէր տրվում կամ չնչին բան։ Գահաժառանգին՝ դեռ անցեալ շաբաթ միայն՝ կառավարութիւնը տուեց 200,000 ղրուշի (20,000 ռուբլու) մի գումար։ Բայց այժմ նրանց համար էլ հանգամանքները փոխվել են. Սուլթան Համիդը երէկ և անցեալ օր նրանց բոլորին կանչել է իր մօտ և տեսնվել։ Ճանաչել են արդեօք միմեանց, որովհետև տասնեակ տարիներից ի վեր նրանք միմեանց չէին տեսել… Գահաժառանգը և սուլթանի միւս ազգականները համբուրել են նրա ձեռքը։ Սուլթանը, ինչպէս լրագիրները հաղորդում են, երէկ իր որդիներից երկուսին ուղարկել է Ստամբօլի կողմը՝ մեծ հրդեհի տեղը դիտելու և գալ իմաց տալու իրան իրանց տեսածի մասին։ Բայց այս փոփոխութիւնն էլ կամովին չէ, ասում են, սուլթանի կողմից։ Այն մեծ յեղափոխական ոյժը, որ ստիպեց նրան իր ձեռքով կտրել օսմանցիներին 32 տարուց ի վեր կաշկանդող շղթաները, այդ նոյն ոյժն է, որ հարկադրել է նրան վարվել գահաժառանգի և իր ազգականների հետ այնպէս, ինչպէս բոլոր սահմանադրական միապետներն են վարվում։ Սակայն այն ոյժը դեռ չէ վերջացրել իր գործը. դեռ ևս պահանջներ ունի նրանից, օրինակի համար այն, որ սուլթանը պէտք է ցրէ Ելդըզի շուրջը պահած իր բանակը։ Արդէն ցրեցին նրա հարիւրաւոր թիկնապահներին։ Սուլթանը ինքն էլ արդէն սկսել է խնայողութիւն անել, իր 800 խոհարարներից 700-ին արձակելով…

Մի բան շատ հետաքրքրական էր գիտենալ։ Ի՞նչ էր նա արդեօք զգում, երբ անցեալ օր իր պալատի բարձունքից դիտում էր այն յաղթական փառահեղ մուտքը, որ հայերն և երիտասարդ-Թիւրքերը սարքել էին իր մահու չափ ատած Իզմիրլեանին…

Ես այստեղ հետևում եմ թէ եւրոպական (ֆրանս., անգլ. և իտալ.) և թէ տեղական լեզուներով հրատարակվող լրագիրներին, մանաւանդ Թիւրք թերթերին, և դեռ չը տեսայ ոչ մի թերթ, որ պաշտպան մնար հին, բռնապետական ռէժիմին։ Ազատութեան հրատարակումից յետոյ հայերէն նոր թերթ չերևցաւ, բացի զաւեշտական թերթերից, որոնք դեռ ևս բաւական անհամ են. ո՞ւր են Պարոնեանի յաջորդները… Իսկ Թիւրքերէն լեզուով շատ են աւելացել, և բոլոր նոր թերթերը ազատական, նոյն իսկ արմատական ուղղութիւն ունեն։ Չը տեսայ ոչ մի բուն պահպանողական և ոչ էլ բուն յեղափոխական թերթ. բոլորը առաջադիմական են գրեթէ, մի քիչ աջ կամ մի քիչ ձախ ուղղութեամբ։ Իսկական քաղաքական կուսակցութիւններ և նրանց օրգանները և բեր կը կազմվեն առաջին երեսփոխանական ժողովի գումարվելուց յետոյ, որ հաւանականաբար տեղի կունենայ նոյեմբերին. դեռ օրը յայտնի չէ։

Բայց կայ մի տարր, որ սաստիկ դժգոհ է կատարված զարմանալի փոփոխութիւնից և առհասարակ նոր դրութիւնից։ Այդ տարրը պաշտօնից արձակված գաղտնի լրտեսների (խաֆիյէ) լեգէոնն է, որոնց թիւը 5000-ից պակաս չէ։ Այժմ այլևս տարակոյս չի մնում, որ վերջին սոսկալի հրդեհը, որ 20—30 տեղից միանգամից երևաց, հրդեհաձիգների գործ է։ Հաստատվում է, որ կայ մի աւազակային խումբ, նախկին լրտեսներից կազմված, որ որոշել է Կ. Պոլիսը այրել, որչափ որ, ի հարկէ, կը կարողանայ… Մեծ հրդեհից յետոյ համարեա ամեն օր մասնաւոր հրդեհներ են պատահում քաղաքի այս կամ այն՝ բայց գլխաւորաբար Թիւրքաբնակ թաղերում։ Ժողովուրդը մեծ տատանման մէջ է։ Ոստիկանութիւնը աշխատում է ծածկել և կեղծ յայտարարութիւններով ուզում է հանգստացնել վրդոված մտքերը, բայց լրագիրները՝ մանաւանդ «Սաբահ»՝ յայտնի փաստերով հերքում են ոստիկանութեան յայտարարութիւնները։ Բազմաթիւ դէպքեր են պատահել հրդեհաձգութեան, բայց բարեբաղդաբար բնակիչները իրանք շրջում են և կարողանում են անմիջապէս առաջն առնել։ Թիւրքերը մզկիթներում ժողովվում և միջոցներ են որոնում հրդեհի դէմ, յոյս չունենալով ոստիկանութեան վրա, «որ,—ասում են թիւրք թերթերը,—մի ժամանակ շատ քաջ էր խուզարկութիւն անելու և նոյնիսկ պահված սիգարէթի թղթեր գտնելու, բայց այժմ հրդեհաձիգներին էլ չի կարողանում բռնել»։ Ուստի ամեն թաղ ինքն է կազմակերպում պահապանների խմբեր, որոնք գիշեր ցերեկ հսկում են։ Ժողովրդական հսկողութիւնն անհամեմատ աւելի աջող է երևում, քան ոստիկանութեանը…

Սարուխան

ԵՂԷՔ ՔԱՂԱՔԱՑԻ, ԲԱՅՑ ՊԱՀՊԱՆԵՑԷՔ ՁԵՐ ԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական լրագիրները և հեռագրական տեղեկութիւնները հաղորդում են, որ օսմանեան պետութեան յոյները իրանց օրինաւոր ազգային վարչութեան, այն է պատրիարքարանի և խառն ժողովի միջոցով յայտնել են, որ պահանջում են 1) պահպանել յունաց պատրիարքարանի բոլոր արտօնութիւնները և 2) օսմանեան պարլամենտում գերակշիռ թիւ յատկացնել յոյն ազգութեան բոլոր միւս՝ ոչ-մուսուլման ազգութիւնների վրա։ «Մենք, —ասված է յոյների յայտարարութեան մէջ,—կազմում ենք օսմանեան կայսրութեան ազգաբնակութեան հինգերորդ մասը, ուստի և թիւրքերից յետոյ պէտք է ունենանք ամենաշատ քանակութիւն ներկայացուցիչների պարլամենտում։ Եւ դուք, թիւրքերդ, պարտաւոր էք տալ մեզ այդ ամենը, պահպանելով մեր բոլոր իրաւունքները և արտօնութիւնները, որ շնորհել են մեզ ձեր սուլթանները»։

Երիտասարդ-Թիւրքերի կոմիտէն պատասխանել է, որ «անհնարին է պարլամենտի պատգամաւորների ընտրութիւնը կատարել ըստ ազգութիւնների, որ օսմանեան պետութեան մէջ չը կան յոյներ, հայեր, բուլգարներ, այլ մի և միացեալ օսմանեան ազգ»։

Ապա, ի լրումն այդ տեղեկութիւնների, եւրոպական մամուլը հաղորդում է, որ հայերը իրանց լրագիրների մէջ արտայայտում են ցասմնացութիւն, սաստիկ յարձակվում են յոյների վրա և ծաղրում են նրանց պահանջները, թէ յոյները պէտք է գերակշիռ դեր ունենան Թիւրքիայի բոլոր քրիստոնեայ ազգութիւնների մէջ։

Ցաւալի է, ի հարկէ, որ հայերը հակակրական և թշնամական ցոյցեր են անում յոյների դէմ։ Յոյների պահանջը, որ իրանք գերակշիռ դեր կատարեն օսմանեան պարլամենտի մէջ, ինքն ըստ ինքեան անարդար է. բայց մենք անարդար ենք գտնում և թիւրքերի պահանջը, որ օսմանեան պարլամենտում ազգութիւնները ներկայացուցիչներ չունենան, որովհետև այդ պահանջը կարող է արտադրել այնպիսի արդիւնք, որ վերջ ի վերջոյ Թիւրքիայի մանր ազգութիւնները, օրինակ ասորիները և նոյն իսկ հայերը, չեն ունենայ ներկայացուցիչ պարլամենտում կամ կունենան շատ աննշան թիւ և պարլամենտի ճնշող մեծամասնութիւնը բաղկացած կը լինի Թիւրքերից, որոնք և կը տնօրինեն ամբողջ պետութեան բաղդը ըստ իրանց հասկացողութեան, և աշխարհային, և կրօնական, և քաղաքական հակումների։

Մեզ թւում է, որ Կ. Պոլսի հայերը գրաւվելով երիտասարդ-Թիւրքերի ընդհանուր ազատամիտ ֆորմուլայով, թէ «պետութեան մէջ չը կան ազգութիւններ, այլ լոկ քաղաքացիներ», մոռանում են, որ այդ ֆորմուլան շատ համակրական է միայն թէօրիայի մէջ, բայց—ինչպէս շատ ճիշտ կերպով նկատում է Պետերբուրգի «Слово» լրագիրը—դա անիրագործելի ուտօպիա է գոնէ փոքր ի շատէ մօտիկ ապագայի վերաբերմամբ։ Մի երկիր, որ բաղկացած է բազմազան տարրերից, իրանց կրօնով, կուլտուրայով, պատմութեամբ, աշխարհահայեացքով, ծագմամբ, սովորութիւններով բոլորովին տարբեր և իրար հակասական ազգերից, չէ կարելի վերածել այնպիսի մի երջանիկ Արկադիայի, ուր բոլոր ազգութիւնները, իբրև եղբայրներ, պէտք է բարգաւաճեն օսմանեան կարմիր դրօշակի հովանու ներքոյ։

«Մշակը» հէնց սկզբում, երբ հրատարակվեց սահմանադրութիւնը Թիւրքիայում, իր բարոյական պարտքը համարեց քարոզել Թիւրքիայի հայերին, թէ այս րոպէին նրանք մի միակ պարտաւորութիւն ունեն կատարելու—միահամուռ ջանքերով նպաստել, աջակցել այն տարրերին, երիտասարդ-Թիւրքերին, որոնք իրանց վրա են առել Թիւրքիայի ազատագրութեան ղեկավարութիւնը։ Բայց քարոզելով այդ, մենք հեռու ենք այն մտքից, թէ հայերը պէտք է հրաժարվեն իրանց ազգային իրաւունքներից, մինչև այժմ ձեռք բերած արտօնութիւններից, չը համարվեն այլ ևս հայեր, այլ լոկ օսմանեան քաղաքացիներ։ Կարելի է շատ լաւ օսմանեան քաղաքացի լինել, բայց միևնոյն ժամանակ չը կորցնել հայ ազգութիւնը։ Ինչու հայերը կամ յոյները պէտք է ոչնչացնեն իրանց ազգային սահմանադրութիւնը, քանի որ դեմօկրատական և սահմանադրական սկզբունքները ոչ միայն ընդունում են, այլև պահանջում են ներքին կամ տեղական աւտօնոմիայի, ինքնավարութեան գոյութիւնը։

Անարդար է յոյների պահանջը՝ գերակշիռ դեր կատարել բոլոր միւս քրիստոնեայ ազգութիւնների մէջ, բայց միւս կողմից, մեզ թւում է, որ հնարաւոր է միջին ճանապարհ գտնել, այնպէս կազմակերպել գործը, որ ամենքը տանելի կացութիւն ունենան, քանի որ գլխաւոր արգելքը այդ տանելի կացութեան մինչև այժմ—դեսպօտիզմը—տապալված է։ Ամեն մի ազգութիւն պէտք է որոշ թւով ներկայացուցիչներ ունենայ օսմանեան պարլամենտում, որպէսզի մեծամասնութիւնը չը կարողանայ ճնշել փոքրամասնութեանը, որ պէտք է նոյնպէս յարգված լինի։

Եւ հայերը Թիւրքիայում պէտք է ընտրեն հետևեալ լօզունգը—լինել լաւ օսմանեան քաղաքացի, բայց և պահպանել ազգային այն բոլոր իրաւունքները, որ նրանք ունեն և որոնցով կարող են պահպանել իրանց ազգայնութիւնը, գոնէ մինչև այն րոպէն, երբ Թիւրքիայում վերջնականապէս և անդառնալի կերպով կը հաստատվի և կամրանայ իսկական սահմանադրական ռէժիմ։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 2 սեպտեմբերի

Երէկ, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքի կենտրոնում, զինված չարագործներ յարձակվեցին պետական կալուածքների վարչութեան դրամատար Օնօսչենկօյի վրա և, վիրաւորելով նրբան գլխից, յափշտակեցին պետական գանձատնից ստացած 2674 ռուբլին։ («Հ. Գ.»)

—

Ժընէվ, 2 սեպտեմբերի

Սեպտեմբերի 1-ին կայացաւ Եւրոպայում ապրող եգիպտացիների պատգամաւորների ժողովը, որ որոշեց սըր Էդուարդ Գրէյին մի հեռագիր ուղարկել և բողոքել Անգլիայի՝ Եգիպտոսը գրաւելու դէմ և պահանջել անյապաղ մաքրել Եգիպտոսը։ Որոշեց նաև մի հեռագիր ևս ուղարկել խըդիվին՝ տեղեկացնելու անգլիական արտաքին գործերի մինիստրին ուղարկած այն հեռագրի մասին, որով խնդրվում է սահմանադրութիւն յայտարարել Եգիպտոսում։ («Հ. Գ.»)

—

Վլադիվօստոկ, 2 սեպտ.

Ահա չորրորդ օրն է, որ աւերածութիւններ է կատարում հեղեղը։ Ջուրը ծածկել է Կուլնէցկայա փողոցը. միջոցներ են ձեռք առնված մարդկանց ազատելու։ («Հ. Գ.»)

—

Կրէմենչուգ, 2 սեպտեմբերի

Երէկ այրվեց Վլօդարսկու ծխախոտի գործարանը։ Վնասներն առ այժմ պարզված չեն, բայց շատ մեծ են։ («Հ. Գ.»)

—

Պրագա, 2 սեպտեմբերի

Եկաւ Իզվօլսկին։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 2 սեպտեմբերի

Աւստրիական երկաթուղիների գեներալ-տեսուչը Գալիցիայի երկաթուղագծերն ուղարկեց մի սանիտար-թարգմանիչ՝ Ռուսաստանից խօլերայի առաջն առնելու միջոցներ ձեռք առնելու համար։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 2 սեպտեմբերի

Բարօն Էրենտալը դեսպան Պազէնի և արտաքին գործերի մինիստրութեան վարչութեան վերատեսուչ կոմս Էստերգազի ուղեկցութեամբ այսօր, սեպտեմբերի 2-ին, մեկնեց Բուխլաու կոմս Բերտգօլդին այցելելու համար։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 2 սեպտ.

«Pol. Cor.»-ը ասում է. «Աւստրո Ունգարիայի քաղաքական շրջանները կողջունեն բարօն Էրենտալի նոր տեսակցութիւնը Իզվօլսկու հետ, իբրև ցանկալի կարևոր տեսակցութիւն, որով վերջանում են բարօն Էրենտալի այն մի շարք տեսակցութիւնները մեծ պետութիւնների ղեկավարիչ ներկայացուցիչների հետ, որոնք սկսվեցին այս տարվայ գարնանը գերմանական պետական կանցլերի այցելութեամբ։ Բարօն Էրենտալի տեսակցութիւնը Իզվօլսկու հետ հանդիսանում է անհերքելի վերջնական հերքում այն կարծիքի, որ իբր գոյութիւն ունեցող ռուս-աւստրիական համաձայնութեան փոխարէն ծագել է այդ շահերին հակադիր համաձայնութիւն։ Այդպիսով հաւաստիացումները բղխում էին այն շրջաններից, որոնց ձըգտումներին համապատասխանում էր Աւստրո Ունգարիայի վերին աստիճանի սառնութիւնը և երկարատև անջատումը Ռուսաստանի հետ։ Իրականապէս, երկու պետութիւնների յարաբերութիւնները այդպիսի բնաւորութիւն չունեն։ Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի համար բարեկամական յարաբերութիւններ պահպանելը և Թիւրքիային վերաբերող հարցերում գործակերպները համաձայնեցնելը քաղաքական տրամաբանութեան հետևանքն է ինքնին։ Այժմեան տեսակցութիւնը յատուկ կերպով ցոյց է տալիս, որ երկու կողմերից շարունակում է գոյութիւն ունենալ այդ հարմոնիան պահպանելու հաստատուն ցանկութիւն, հարմոնիա, որին համա-եւրոպական տեսակէտից պէտք է մեծ գնահատութիւն տալ։ Աւստրո Ունգարիայի քաղաքական շրջանները Իզվօլսկու այցելութիւնից սպասում են երկարատև բարեյաջող հետևանքներ եւրոպական խաղաղ քաղաքականութեան համար և սրտագին ողջունում են ռուս մինիստրին, որին տեղումս բարձր են գնահատում»։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 2 սեպտ.

«Fremdenblatt»-ը բարօն Էրենտալի և Իզվօլսկու տեսակցութեանը նուիրած յօդուածով գնահատում է Իզվօլսկու մատուցած ծառայութիւնները Ռուսաստանի կապած դաշնագրութիւնների վերաբերութեամբ թէ Եապոնիայի և թէ Անգլիայի հետ, ընդգծում է այն մեծ աջողութիւնը, որ ունեցաւ Իզվօլսկու հանդէս գալը Պետական Դումայում։ Լրագիրը յիշեցնում է Աւստրո Ունգարիայի և Ռուսաստանի միահամուռ բարենորոգչական գործունէութեան մասին Մակեդօնիայում, շեշտում է այն դրութեան հոմանիշութիւնը, որ գրաւել են նրանք նկատի առնելով Թիւրքիայի նոր կազմը։ («Հ. Գ.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Թէհրան, 2 սեպտեմբերի

Օգոստոսի վերջերին Հիւսիսային Պարսկաստանի քաղաքներում տարածվեց այն հեռագրի բնագիրը, որ իբր Նէջէֆի ուլէմները ուղարկել են շահին։

Այդ հեռագրի մէջ ի միջի այլոց մատնանշվում է, որ իսլամի ու պետութեան հզօրութեան պահպանութիւնը յենվում է սահմանադրական կազմի վրա։ Գիտակցելով այդ ճշմարտութեան անփոփոխելիութիւնը, Թիւրքիան հրատարակեց սահմանադրութիւն։

Իրանում, չը նայած որ հանգուցեալ Մուզաֆֆէր-Էդդին շահը հանդիսաւոր կերպով հաստատեց սահմանադրական հիմունքները, նրանք բարեյաջող հիմք չը գտան։ Դրա պատճառը շահամոլ, կրօնի ու պետութեան դաւաճանների գործողութիւնների մէջ տեսնելով և մեղադրելով պարսից այժմեան կառավարութեանը ժողովրդի օրինական պահանջներին սպասվող աջակցութիւնը ցոյց չը տալու մէջ, որով կառավարութիւնը խռովութիւն սերմանեց և կորստեան դուռը հասցրեց մահմեդականների կեանքն ու գոյքը, ուլէմները դիմում են Մահմէդ-Ալի շահին, համոզելով նրան ձեռնարկել մէջլիսի՝ անկեղծ կարգ ու կանոնի և օրինակատարութեան միակ հաստատման գումարման։ («Հ. Գ.»)

—

Էյն-ուդ-Դովլէի անաջողութիւնների մասին Թաւրիզից ստացված տեղեկութիւնները վատ ներգործութիւն ունեցան շահի առողջութեան վրա։ Գերմանական լրագիրների ասելով, արդէն մի քանի օր է, որ շահը պառկած է անկողնում։ Նեարդային քայքայումը բարդացել է ստամոքսային և երիկամունքների հիւանդութիւններով։

—

Թէհրանից հեռագրում են «Б. В.» լրագրին.

Զինուորական մինիստրը չէ ժխտում, որ կարելի է երկիւղ կրել յեղափոխական բռնկումից պարսկական մայրաքաղաքում։

Շահի մերձաւորները անխուսափելի են համարում նոր բռնկումը այն դէպքում, եթէ շահը կատարելու չը լինի իր տուած խոստումները պարլամենտը երեք ամսվայ ընթացքում հրաւիրելու մասին։

—

Թէհրանից հեռագրում են «Баку» լրագրին.

Շահը կալանաւորելու և աքսորելու սպառնալիքով պահանջել է Էմիր-Ջենգից և միւս ըէակցիոներներից անյապաղ վերջ տալ աւազակութիւններին և կողոպուտներին։

Միաժամանակ Թաւրիզի ազգաբնակութեանը յայտարարված է, որ եթէ նա հնազանդվելու լինի կառավարութեանը՝ ամնիստիա կը շնորհվի։

Շահը երդումով ապահովում է մէջլիսի գումարումը նոյեմբերի 1-ին և սահմանադրութեան պահպանումը, պահանջելով վերջ տալ յեղափոխական գործունէութեանը։

—

Թէհրանից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին.

Շահը տեղեկացրել է ռուսաց դեսպանին, որ մի քանի օրից յետոյ կուղարկվի նրան նոր ընտրողական օրէնքի նախագիծը, որի համաձայն ընտրութիւնները տեղի կունենան սեպտեմբերին, իսկ մէջլիսը կը հրաւիրվի նոյեմբերի 1-ին։

—

Թաւրիզից հեռագրում են օգոստոսի 26 ին «Голосъ Москвы» լրագրին.

Տեղի են ունենում նոր անկարգութիւններ և արիւնահեղ ընդհարումներ։ Կողոպտված են բազմաթիւ մագազիններ։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Լօնդօնի «Globe» լրագիրը հաղորդում է մի շատ կարևոր տեղեկութիւն։

Ի նկատի առնելով Թիւրքիայի մէջ կատարված յեղաշրջումը և այն հանգամանքը, որ նոր ռեժիմը այնտեղ մեծ շանսեր ունի երկարատև դառնալու,—պետութիւնները, Անգլիայի նախաձեռնութեամբ, բանակցութեան մէջ են մտել Բեռլինի դաշնագիրը վերաքննութեան ենթարկելու համար։

Մտադրութիւն կայ Մակեդօնիան բոլորովին ազատել եւրոպական կօնտրօլից, իսկ Աւստրո-Ունգարիան Նօվօ-Բազարի սանջակից պէտք է բոլորովին հեռանայ, որի փոխարէն նրան իրաւունք կը վերապահվի վերջնականապէս իւրացնել Բօսնիան և Հերցեգօվինան։

Գերմանիան իր կողմից պատրաստակամութիւն է յայտնել հրաժարվել Թիւրքիայում ունեցած իր արտօնութիւններից,—հիւպատոսական դատարաններից և սեփական պօստից։

«Loc. Anz.» այլ կերպ է հաղորդում միևնոյն տեղեկութիւնը։ Նրա ասելով, նախաձեռնութիւնը պատկանում է ոչ թէ Անգլիային, այլ Թիւրքիային իրան, որը իբր թէ յայտնել է ֆրանսիական կառավարութեանը, որ սուլթանը պատրաստ է հրաժարվել իր սուվերենական իրաւունքներից Բօսնիայի և Հերցեգօվինայի, Բօլգարիայի, Արևելեան-Ռումելիայի, Կրետէի և Եգիպտոսի վերաբերմամբ, եթէ միայն Եւրոպան փոխարէնը կապահովէ իրան ազատելով Նօվօ-Բազարի սանջակը աւստրո-ունգարական զօրքերից և կազատի Մակեդօնիան Բօլգարիայի ու Յունաստանի զանազան ոտնձգութիւններից։

—

„Баку“ լրագրին հեռագրում են Կ. Պօլսից.

Քեամիլ-փաշան յայտնել է, որ կառավարութիւնը երաշխաւորում է հայրենիք վերադարձող հայերի անձեռնմխելիութիւնը։

Հայերի կարծիքները քննութեան կենթարկվեն պարլամենտում, որտեղ հայերի ներկայացուցիչները միւս ազգերի հետ կը լինեն հաւասար։

Պարլամենտի գումարվելու օրը երկրորդ անգամ ամնիստիա կը հրատարակվի էմիգրանտների համար, վերականգնելով նրանց քաղաքական իրաւունքները։

—

Դեսպանական և այլ լաւատեղեակ շրջաններում շատ անհանգիստ կերպով են նայում մօտ ապագայի վրա։ Բանտարկված մինիստրների ու բարձրաստիճան պաշտօնեաների արձակումը, որ տեղի ունեցաւ սուլթանի անհատական ջանքերով, վերին աստիճանի սրել է Աբդիւլ-Համիդի և «Միութեան ու առաջադիմութեան կոմիտէտի» ամենաազդեցիկ անդամների միջև եղած յարաբերութիւնները։

Անցեալ շաբաթ օրվանից ի վեր կառավարութիւնը մօտ ժամանակներում փոխվելու մասին լուրերը այս աստիճան յամառ կերպով են պտտում, որ զօրաբանակի մի քանի մասերում խլրտումներ են առաջացել։ Մակեդօնիայում 1800 զինուորներ, որ արձակված էին արձակուրդով, պահանջել են օֆիցերներից բացատրութիւն տալ փադիշահի դրութեան մասին։ Ինչ-որ անծանօթ մարդիկ ասել են նրանց, թէ փադիշահը սպանված է։ Նրանց հանգստացրել են։ Այնու ամենայնիւ զինուորները ստիպել են ապրանքատար նաւի նաւապետին դէպի Կ. Պօլիս նաւարկել, որպէսզի այնտեղ անձամբ համոզվեն, թէ սուլթան Աբդիւլ-Համիդը կենդանի է։

Բօսֆօր հասնելուն պէս՝ մի քանի հարիւր զինուորներ գնում են սուլթանի պալատը, ուր նրանց յայտնում են, թէ սուլթան Աբդիւլ Համիդը կենդանի է և որ նրան ոչ մի վտանգ չէ սպառնում։

Քեամիլ փաշայի մինիստրութիւնը աւելի ու աւելի է դժուարանում երկու հակառակ հոսանքներին յարմարվել՝ մի կողմից արքունիքի, իսկ միւս կողմից կօմիտէտի հոսանքները։ Բացի դրանից, դրամի կատարեալ բացակայութիւնը թոյլ չէ տալիս նրան իր ծրագրում խոստացված փոփոխութիւնները իրագործել։ Անցեալ շաբթի մէջ նրան դժուար կացութիւնից հանեց պետական պարտքերը կարգաւորող կօմիսիան, համաձայնելով պետական գանձարանին փոխ տալ 1,000,000 թիւրքական ոսկի։ Հաւանական է համարվում նոյնպէս, որ պարլամենտը հաւանութիւն կը տայ 4,000,000 ոսկի փոխառութիւն անելու ծրագրին, որ պիտի անվի մաքսային եկամուտների երաշխաւորութեամբ։ Բայց դա մի ժամանակաւոր թեթևութիւն միայն կարող է լինել։ Իրերի դրութեանը լաւ ծանօթ մարդիկ գիտեն, որ առանց խոշոր փոխառութեան Եւրոպայի դրամական շուկայում, նոր պետական շէնքը անխուսափելիօրէն կը կործանվի։ («Р. У.»)

—

Լօնդօնից հեռագրում են «Бирж. Вѣд.» թերթին.

Յամառ լուրեր են պտտում այն մասին, թէ կառավարութիւնը անխուսափելի կերպով պիտի փոփոխվի Թիւրքիայում։ Այդ լուրերը հաւանականութիւն են ստանում նամանաւանդ Նիւ-Եօրկից ստացված վերջին տեղեկութիւնների հիման վրա։ Այդտեղից Լօնդօնի թերթերին հեռագրում են.

«Երէկ Նիւ-Եօրկում տեղը ունեցած երիտասարդ-թիւրքերի ժողովում Մուսուրուս-փաշան, որը բաւականին խոշոր դրամական զոհողութիւններ է արել ի նպաստ թիւրքական յեղափոխական շարժումների, ճառ արտասանեց, որի մէջ յայտարարեց, թէ սուլթան Աբդիւլ-Համիդը գահի վրա կը մնայ յամենայն դէպս ոչ աւելի, քան մէկ ամիս։ Եթէ մինչ այդ ժամանակ Աբդիւլ-Համիդը յօժարակամ չը հրաժարվի գահից, նրան կը հեռացնեն ուժով, և նրա յաջորդը կը [illegible] Ռեշադը։ Այդ բանը, Մուսուրուս-փաշայի ասելով, արդէն որոշված է սկզբունքով»։

Նոյնպիսի տեղեկութիւններ ստացել են և մի քանի լրագիրներ Կ. Պօլսից, ուր երիտասարդ-թիւրքերի ղեկավարները ամեն կերպ աշխատում են, որ մամուլը ոչինչ չը խօսի կառավարութեան փոփոխութեան մասին։

—

Անցեալ կիրակի Կ. Պօլսում, Սկիւտարի մօտ, կաղնոտների դպրոցի շէնքում, տեղի է ունեցել մի բանկետ յօգուտ Ստամբօլի հրկիզեալների, որին ներկայ է եղել ամբողջ դիպլօմատիական մարմինը։

Բանկետի բոլոր ճառախօսները յոյս են յայտնել, որ ընտրութիւնների ժամանակ զանազան ազգութիւնների մէջ աննշան թիւրիմացութիւններ միայն կարող են ծագել։ Խոշոր անկարգութիւններից վախենալու առիթներ չը կան։

Այնուամենայնիւ կառավարչական իշխանութիւնը, առանց դուրս գալու արդարութեան սահմաններից, խիստ կերպով կը պահպանէ կարգը։ Կարելի է յուսալ, որ յոյները, հայերը և բօլգարները ամեն կերպ կաշխատեն այս բարդութիւնների առաջն առնել, որոնք կարող են օգուտ տալ միայն օտարերկրացիներին։ Իրանք թիւրքերը, իրանց առանձնայատուկ համբերողութեամբ, երբէք առիթ չեն տալ թիւրիմացութիւնների։

Կ. Պօլսի մամուլը արձանագրում է, որ ազգային թիւրքական զգացմունքը ամենից աւելի զարգացած է բօլգարների մէջ, քան թէ յոյների կամ հայերի։

Վերջիններս տարածում են հայ ազգաբնակութեան մէջ հայոց հին թագաւորների պատկերները, անշուշտ, ինքնուրոյն Հայաստանի գաղափարը տարածելու նպատակով։

Կ. Պօլսի քաղաքային խորհրդի ընտրութիւնը խաղաղ անցաւ։ Արքայազն Սաբահէդդինը հրաժարվել է իր թեկնածութիւնը դնելուց։ («Бирж. Вѣд.»)

—

Կառավարութեան և կօմիտէտի միջև կայացած համաձայնութեամբ, «N. Fr. Pr.»-ի ասելով, վճռված է, որ այսուհետև ծառայութիւնը բարձրացնելը, պարգևատրելը և այլն տեղի պէտք է ունենայ համապատասխան մինիստրութիւնների առաջարկութեամբ։ Առանց այդպիսի առաջարկութեան, Եըլդըզը, որ մինչև այժմ չափազանց ի չարն էր գործադրում այդ գործը, այլևս իրաւունք չունի ոչ պաշտօններ, ոչ շքանշաններ և ոչ էլ պարգևներ տալ։

—

Արաբների անկախութեան համար աշխատող շարժման պարագլուխ Նէջիբ-Ազուրին, որ ներկայումս գտնվում է Պարիզում, շուտով կուղևորվի դէպի Սիրիա՝ ներկայ լինելու ընտրութիւններին։ Նէջիբ-Ազուրին կռիւ կը մղի Թիւրքիայի դէմ, որի վերածնութեանը նա վճռել է աջակցութիւն ցոյց տալ այն դէպքում միայն, եթէ Արաբիային ինքնավարութիւն տրվի։

Նէջիբ-Ազուրին ձգտելու է իր նպատակին սահմանադրական միջոցներով։ („Р. Сл.“)

—

Նիւ Եօրկում կալանաւորված է գաղտնի ոստիկանութեան պետ Զիա բէյը, որ ապրում էր Ամերիկայում ուրիշ անունով։ Երիտասարդ-Թիւրքերը պահանջում են յանձնել նրան, և Վաշինգտոնի կառավարութիւնը, ըստ երևոյթին, պատրաստ է յանձնել նրան Թիւրքիային։

—

Կ. Պօլսի մամուլը ուղղակի անճանաչելի է դարձել. նա լաւացել է թէ որակով և թէ քանակով։ Առաջներում թիւրքերէն լեզուով հրատարակվող լրագիրների փոխարէն՝ այժմ լոյս են տեսնում 20-ից աւելի լրագիրներ։

Բոլոր լրագիրների ուղղութիւնը առաջադիմական է, բայց կան ի հարկէ ուրիշ գծեր էլ։ Ամենից շատ այստեղ տարածվածը երիտասարդ թիւրքերի օրգան «Իկդամն» է։ «Թանինը» պաշտպանում է ամբողջ ազգաբնակութեան շահերը։

«Թանինում» գլխաւորապէս աշխատում են նախկին քաղաքական էմիգրանտները և արտասահմանում ուսանող երիտասարդները։

«Թանինի» տիրաժը մի փոքր պակաս է «Իկդամից» (նախկին պաշտօնական թերթից)։ «Իկդամը» տարածվում է օրական 50,000 օրինակ, իսկ «Թանինը» 30—40,000 օրինակ։ Պաշտօնական ոստիկանական նիւթերն ու չոր տեղեկութիւնները այժմ երկրորդական տեղ են բռնում, գրւում են վերջին երեսը, իսկ առաջին տեղը բռնում են պարլամենտական ընտրութիւնների, սահմանադրութեան թերութիւնների, մինիստրների ու սուլթանի պալատական ծախքերը վերաբերեալ յօդուածները։

«Իկդամի» առաջին առաջնորդողը ամենքին ապշեցրեց իր արտասովոր համարձակութեամբ։ Շատերը լալիս էին, կարդալով այդ յօդուածը։ Լոյս տեսած բոլոր համարներն էլ վաճառվեցին, և մնացած հազուագիւտ համարների համար վճարում էին հատին 40 պիաստր (3 ր. 60 կոպ.)։

Ռէակցիօն ուղղութեամբ լրագիրներ առայժմ չը կան։ Քաղաքական լրագիրներից բացի, կան նաև մի քանի երգիծաբանական թերթիկներ։ («Р. У.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Պարտադիր որոշում

—

1) Արգելվում է պաշտօնական զգեստներ կրել այն անձանց, որոնք այդ իրաւունքը չունեն։

2) Արգելվում է մայթերի վրա, փողոցներում կամ հրապարակներում ման գալ և կանգնել խումբ խումբ, խանգարելով անցուդարձը և անվայել խօսքեր ուղղելով անցորդների հասցէին։

3) Արգելվում է ռեստորանների, պանդոկների, խմիչքեղէնների, զուարճատեղիների, այգիների, հիւրանոցների, ցիրկերի, թատրոնների, այգիների և կայարանների բուֆէտների, սրճարանների, գարեջրատների, գինեվաճառների և նման հաստատութիւնների տէրերին թողնել մտնել իրանց խանութները միջնակարգ և ստորին կրթական հաստատութիւնների աշակերտներին և անչափահասներին։

4) Արգելվում է պրօժեկտօրների, սինեմատօգրաֆների և այլն տէրերին թողնել միջնակարգ և ստորին կրթական հաստատութիւնների աշակերտներին և անչափահասներին երեկոյեան ժամը 9-ից յետոյ։

5) Արգելվում է թատրոնների, ցիրկերի և այլն անտրեպրենեօրներին թողնել միջնակարգ և ստորին կրթական հաստատութիւնների աշակերտներին այն ներկայացումներին և զուարճալի տեսարաններին հանդիսատես լինել, որոնց մասին աֆիշաներում վարչութեան կարգադրութեամբ յայտարարված կը լինի, որ աշակերտութեանը արգելվում է։

Այս որոշումը իր ոյժի մէջ է մտնում հրատարակվելու օրից։

Ստորագրեց Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետ գ.-մ. Բեաբինկին։

Հրատարակելով վերոյիշեալ պարտադիր որոշումը հասարակական կարգ ու կանոնը պահպանելու նպատակով, ես, ընդսմին, հարկաւոր եմ համարում յայտնել հետևեալը։

Աշակերտները, համաձայն իրանց դպրոցական իշխանութեան սահմանած կանոնների, պէտք է կրեն որոշված զգեստ և ունենան հետները աշակերտական տետրակներ՝ հաստատված կանոններով։

Այդ տետրակները առաջին իսկ պահանջով աշակերտները պէտք է ներկայացնեն ոստիկանութեան պաշտօնեաներին, զինուորական խմբերի կառավարիչներին, կոմենդանտական վարչութեան պաշտօնեաներին և ուսումնարանական մարմնի անդամներին։

Նաև անհրաժեշտ եմ գտնում աւելացնել, որ այն աշակերտների մասին, որոնք կունենան սահմանված զգեստը և աշակերտական տետրը, յիշեալ կանոնները նրանց կողմից խախտելու դէպքում կը հաղորդվի նրանց իշխանաւորներին, իսկ նրանք, որոնք զգեստը և տետրը չեն ունենայ, կը ձերբակալվեն և կուղարկվեն ոստիկանատուն՝ նրանց ով լինելը պարզելու և ապա դպրոցական վարչութեանը ուղարկելու համար։

Ստորագրեց՝ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետ գ.-մ. Բեաբինկին։

2 սեպտ. 1908 թ.

—

Առաջարկում եմ պրիստաւներին խիստ հսկողութիւն սահմանել առևտրի ժամանակի մասին գեներալ-նահանգապետի հրատարակած պարտադիր կանոնների կատարման վրա, ըստ որում մանուֆակտուրային, գալանտերէյնի և այլ խանութները, որոնք առևտուր են անում ոչ մթերքներով, պէտք է փակվեն երեկոյեան ժամը 7-ից ոչ ուշ։ Այն խանութները և կրպակները, որոնք առևտուր են անում մթերքներով և ուտեղէններով, պէտք է փակվեն երեկ. ժամը 8 ից ոչ կանուխ, որով այդ ժամից յետոյ կարելի է առևտուր անել, նայած թէ խանութատէրերը ինչպիսի պայմաններով են կապվել իրանց ծառայողների հետ։

Ձերբակալել և անմիջապէս ոստիկանատուն տանել այն գործակատարներին, ծառայողներին և նրանց, որոնք այսպէս թէ այնպէս փորձ կանեն խանգարել առևտուրը յիշեալ ժամերում կատարելուն և պահանջ կը դնեն իրանց տէրերից՝ սահմանափակել առևտուրը։

Այն պատիժը, որ կը ստանան այդպիսի ծառայողները, կը գործադրվի և տէրերի վրա, եթէ կատարեն ծառայողների պահանջները։

Պրիստաւները պէտք է արձանագրութիւններ կազմեն և ուղարկեն ինձ։

Ստորագրեց Թիֆլիսի ոստիկանապետ՝
Փոխգնդապետ Ցիխոցկի

ԽՕԼԵՐԱ

—

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը թոյլատրել է Բագուի նահանգի Լէնքօրանի քաղաքային ինքնավարութեան ծախսել 500 ռուբլի քաղաքային գումարներից խօլերայի դէմ սանիտարական միջոցներ ձեռք առնելու համար։

◆ Թիֆլիսի քաղաքային քիմիական լաբօրատօրիան քիմիա-բակտերիօլօգիական հետազօտութեան ենթարկեց Կուր գետի

Ջուրը։ Մի անգամ ևս պարզվեց, որ նրա մէջ խոլերային վիբրիոններ չկան պարունակվում։

◆ Դուշէթ քաղաքի քաղաքային լիազօրները Թիֆլիսի նահանգապետի միջոցով միջնորդութիւն են յարուցել, որ խոլերայի դէմ միջոցներ ձեռք առնելու համար Դուշէթին յատկացվի 2000 րուբլի։

◆ Սեպտեմբերի 2-ին Թիֆլիսում խոլերայով հիւանդացան—1) Ալէքսանդրա Դէնիսօվա, 33 տարեկան, Տէատրալնի փող. № 6 տանը. 2) Իվան Շելիժենտիկօվ, 61 տարեկան, Մարինօվսկի փող. № 3 տանը. 3) Տիտօ Ակօպօվա, 31 տարեկան, Մուխրանսկի փող. № 25 տանը. 4) Բախս Ակօպօվա, 50 տարեկան, նոյն տեղում։

◆ Թիֆլիսում սեպտեմբերի 2-ին հիւանդացան—6-րդ քաղաքամասում, բուսաբանական այգում, բուֆէտի ծառայ թիֆլիսեցի Սարգիս Աղասեանը. Կօրօնցօվսկայա փողոցում, № 38 տանը պարսկահպատակ Մաշադի Իբրահիմ Աբաս-օղլին. 5-րդ քաղաքամասում, Մուխրանսկայա փողոցում, № 25 տանը Կիտօ Վարդանեանը և Բայավ Մովսիսեանը. 7-րդ քաղաքամասում, Սրետէնսկայա փողոցում, № 3 տանը, Իվան Ցելիաէկտինօվ. Թելաւսկայա փողոցում, № 12 տանը Յարութիւն Յարութիւնեանը. Ջօրաբաշի փողոցում, № 46 տանը Ավանեա Ասլանեան. 9-րդ քաղաքամասում, Մադաթեան կղզու վրա Եգօր Աբաշվիլին. Նիկօլաեվսկայա փողոցում, № 48 տանը ազնուականուհի Նինա Ֆէօդօրօվան. 3-րդ քաղաքամասում, Պուշկինսկայա փողոցում, հոգևոր սեմինարիայի նկուղային յարկում, Պոլտավայի նահ. գեղջկուհի Օլգա Մեշչանկօվա։ Հիւանդները տարվել են քաղաքային խոլերայի բարաքները։

Պետերբուրգում սեպտեմբերի 1-ից մինչև 2-ը հիւանդացան 250, մեռան 64 հոգի։ Նահանգում հիւանդացան 9, մեռան 4 հոգի։

Գանձակում սեպտեմբերի 2-ին հիւանդացան 11, մեռան 7 հոգի։ (Հ. Գ.)

Ռօստօվում Դ/Վ օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 1-ը քաղաքապետութեան մէջ հիւանդացան 349, մեռան 154 հոգի։ Համաճարակի սկզբից հիւանդացել են 960, մեռել են 424 հոգի։ («Հ. Գ.»)

Խոլերան շարունակում է զոհեր տանել Եկատէրինօսլավի, Կերչի, Կիևի, Կօստրօմայի, Սամարայի, Տամբօվի, Ուրալսկի, Եարօսլավի, Տիրասպօլի և այլն նահանգներում։ («Հ. Գ.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

◆ Մօտ ժամանակներս Կիևում վախճանվել է Պետական Դումայի անդամ՝ քահ. Կ. Ն. Ռօզնատօվսկին։ Հանգուցեալը ծնվել է 1858 թւին, աւարտել է հոգևոր ճեմարանը և մինչև պատգամաւոր ընտրվելը եղել է կրօնուսույց զանազան դպրոցներում։ Պետական Դումայում նա պատկանում էր ծայրայեղ աջակողմեանների փրակցիային, բայց չը նայելով դրան՝ նա յաճախ նրանց հակառակ դիրք էր բռնում։ Նրա համոզմունքների անկախութիւնը մանաւանդ խիստ կերպով աչքի ընկաւ Պ. Ն. Միլիւկովի դէմ Դումայի աջակողմեան-հոկտեմբերեան մեծամասնութեան կողմից կատարված յայտնի «ցոյցի» ժամանակ։ Նախ քան աջակողմեանները հետ մտնալը, Ռօզնատօվսկին պարտք համարեց անձամբ Միլիւկովից իմանալ նրա Ամերիկա գնալու պատճառը։ Տեղեկութիւններ ստանալով՝ նա բոլորովին հրաժարվեց միանալ ցուցարարներին և իր տեղումը մնաց նստած այն ժամանակ, երբ Դումայի ամբողջ աջակողմը՝ Միլիւկովի ամբիոն բարձրանալուն պէս՝ հեռացաւ դահլիճից։ Դումայում Ռօզնատօվսկին յաճախ խօսում էր ժողովրդական կրթութեան հարցի մասին։

◆ Պետական Դումայի աջակողմեան անդամների տուած տեղեկութեան համաձայն, ֆինլանդական սէյմի պետիցիան՝ ֆինլանդական գործերի առիթով մօտ ժամանակներս սահմանված ամենահպատակ զեկուցման նոր կարգը փոփոխելու մասին՝ չի վարվի. զեկուցումների նոր կարգը կառավարչական շրջանները որոշել են, ինչ էլ որ լինի, անպատճառ պահպանել։

◆ Միսիոներական համագումարի որոշումը՝ կրօնի վերաբերեալ օրինագծերը Դումայի իրաւասութիւնից հանելու համար, ռուսաց սինօդում մեծ համակրութեամբ է ընդունվել։ Սինօդում բոլորովին անընդունելի են համարում ներքին գործերի մինիստրի կողմից Դումային ներկայացրած խղճի ազատութեան վերաբերեալ օրինագծերը և մտադիր են ամեն ջանք գործ դնել, որպէսզի կառավարութիւնը յետ վերցնի այդ օրինագծերը։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Սեպտեմբերի 1-ին կովկասեան զինուորական-նահանգական դատարանում քննվեց Խաչատուր Դալլաքօվի գործը, որ մեղադրվում է Սամահրիսի մօտ տ. Քալանթարեանին գերող աւազակախմբին պատսպարան տալու և նրան թագցնելու մէջ։ Դատարանը մեղաւոր ճանաչեց Դալլաքօվին յիշեալ յանցանքի մէջ և դատապարտեց նրան 15 տարով տաժանակիր աշխատանքների։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

Ախլաթեան (Սիսիան), 1 սեպտեմբ.

Դարձեալ տաւարի ժանտախտի հոտն է փչում վիճակումս։ Դեռ «ղաբաղ» կոչված ցաւը, որից տնային կենդանիները քայքայվել, ուժասպառ էին եղել, չը վերջացած, այժմ յաջորդում է չարագուշակ ժանտախտը, որի անհետանալու տարին դեռ չէ լրացել։

Շաղատ և Մազրա գիւղօրայքում արդէն ցաւի նշոյլներ են երևացել, որից Մազրայում մի քանի կենդանիներ են զոհ եղել։ Ուստի, որովհետև համաճարակը լայն չափեր չը ստանայ, հարկաւոր են անհրաժեշտ շուտափոյթ բժշկական լուրջ միջոցներ, որպէսզի կարելի լինի խափանել ոչնչացնել՝ քանի դեռ չէ տարածվել միւս գիւղօրայքում։

Ահա թէ ինչպիսի սուղ պատճառներ են ստիպում չարքաշ գիւղացուն դիմել պանդխտութեան։ Դեռ անցեալ տարվայ ցաւից վէրքը չը բուժված, հանդէս է գալիս և մի սարսափելի ու ինքնատինքեան քայքայիչ ցաւ, որի դէմ կռուելու անհրաժեշտութիւն է զգացվում։

Ս. Ֆրանգուլեան

Տանձոտ գիւղ (Արտանուշի շ.), 26 օգ.

Այս տարի երկու անգամ զարկեց կարկուտը և ոչնչացրեց ամբողջապէս ծխախոտը, իսկ հացաբոյսերը կիսով չափ։ Բաւական վնաս հասցրեց և հեղեղը։ Չը վնասված տեղերը ևս հնձելիս զարմացվում է, որ անցեալ տարիներից շատ պակաս է բերք ստացվում։ Գիւղացիութիւնը անցեալից շշմած, ներկայից զարհուրած՝ ապագայի մասին յուսահատութեան է մատնված։ Ամենացաւալին այն է, որ հեռու է մեր գիւղը կենտրոնական քաղաքներից, որտեղից ստանային գոնէ ալիւր հեշտութեամբ։

Ա. Նուրիջանեան

Շաղատ գիւղ (Սիսիան), 25 օգոստ.

Շաղատ գիւղը բաղկացած է 150 տնից։ Գիւղում չը կայ մի կարգին ուսումնարան, ուր գիւղի մանուկները կարողանային գրել կարդալ սովորել։

Գիւղիս երիտասարդները անցեալներում համախմբվելով կազմեցին մի գիւղական միութիւն, որպէսզի վերջինս հոգայ գիւղի կարիքները։ Սակայն այդ միութեան գործունէութիւնը կանգ է առել շնորհիւ երիտասարդութեան երկու մասի բաժանվելուն՝ տեղիս երկու քահանաների պատճառով։

Ցանկալի էր, որ մեր երիտասարդութիւնը ուշք չը դարձնէր գիւղական հին սովորութիւններին և լուրջ վերաբերվէր իր գիւղի անհրաժեշտ կարիքներին։

Ե. Գ.

«ՔԵՐԾ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Դաշբուլաղ գիւղ (Նուխու գաւ.), 1 օգ.

Վարդավառի տօնին Դաշբուլաղ գիւղում հիւր էին եկել թէ Նուխուց և թէ 2—10 վերստ հեռաւորութեան վրա գտնվող հարևան Սաբաթուից, Զօրաղթից, Փեօգբուլաղից Ջափարաւաղից և այլ գիւղերից։

Համարեա բոլոր հիւրերը և գաւառիս հաշտարար դատաւորը ներկայ էին պատարագին։ Պատարագիչ քահանան մի քանի խօսք ասաց յօգուտ «Քերծ» գրադարանի։ Պատարագից յետոյ երկսեռ հասարակութիւնը ճանապարհվեց վաղօրօք դէպի «Քերծ» գրադարանը։

Գրադարանի բակում բացօթեայ կատարեցին եկեղեցական ծրակատարութիւն. ապա խումբը հանդէսը բացեց երգելով «Մեր հայրենիք» երգը։

Խօսեց Նուխուց եկած Սահակ քահ. Տէր-Պօղոսեանը, յայտնելով որ իր վրա պարտականութիւն է դրված ներկայացուցիչ լինելու և մի քանի խօսք ասելու Թիֆլիսաբնակ դաշբուլաղցիների կողմից։ Նա բացատրեց գրադարանների անհրաժեշտութիւնը գիւղերում։

Ապա խօսեց «Անի» շաբաթաթերթի ներկայացուցիչ Հայրիկը՝ բացատրելով գիւղացոց՝ միութիւնների անհրաժեշտութիւնը և թէ ինչպէս մէկը հարստանում ու ճնշում է մեծամասնութեանը և այլն։

Երրորդը խօսեց ռուսերէն հաշտարար դատաւորը, յայտնելով այն միտքը, որ ժամանակ է խօսքից գործի անցնելու, որովհետև մեծ կարիք կայ կուլտուրական հիմնարկութիւնների, որոնցից մէկն է և գրադարանը։

Ա. Տօնեանը կարդաց «Քերծ» գրադ. զեկուցագիրը, որից երևաց, որ առ այժմ փողով նուէրներ է ստացել մօտ 80 ր., իսկ գրքերով 2085 կտոր՝ 618 ր. 80 կ. արժողութեամբ, և մի կտոր գետին (Խալան-բէկ Մելիք Ալլահվերդեանից և Ռստամ-իւզբաշի Փանեանից) գրադարանի սեփական շինութեան համար։

Յետոյ խօսեցին Ա. Թէմուրեան և եղբայր Սէյրանեան։ Ուսուցիչ Յ. Շիրվանեան կարդաց շնորհաւորական հեռագիրները՝ թւով վեց հատ։ Վերջում հիմնադիրների կողմից Ս. շնորհակալութիւն յայտնեց բոլոր աջակցող ընկերներին և նուիրաբերողներին՝ յայտնելով որ «Քերծ» գրադարանը պիտի պահպանվի նիւթապէս տարաբնակ դաշբուլաղցիներից. ուստի տեղացիները պարտաւոր են միմիայն օգտվել կարդալով...

Հանդէսից յետոյ տեղի ունեցաւ մօտիկ այգում ճաշ, որի ժամանակ գրադարանի սեփական շինութեան ֆօնդի համար եղաւ հանգանակութիւն։

Նուիրատուներն են հետևեալները. Ալ. Մելիք-Ալլահվերդեան 5 ր., Բ. Մելիք Ալլահվերդեան, Կ. Գէորգեան, Գ. Յակովբեան և Ա. Աղաբէկեան 3-ական ր., Ա. Ասրիեան 2 ր., Ս. քահ. Տէր-Պօղոսեան, Հայրիկ, Հ. Ահարոնեան, Ե. քահ. Տէր-Յարութիւնեան, ուսուցիչ Ս. Մուսայէլեան, Ս. Անդրասեան, Կ. Օհանեան, Յ. Սօփիեանց, Ա. Թէմուրեան, Մ. Լալայեան, Վ. Ղազարեան, Վ. Կարինեան, Ա. Աջումեան, Պ. Տէր-Գէորգեան և Գ. Զախարեանց 1-ական ր., Յ. Թասալեան 55 կ., Մ. Դօստեան և Յ. Լալայեանց 50-ական կ., Ս. Աւագեան 40 կոպէկ։ Գումարն է 35 ր. 95 կ.։ Բոլոր հաշիւները յանձնված են «Քերծ» գրադարանի նորընտիր վարչութեան հինգ անդամներին՝ Ե. քահ. Տէր-Յարութիւնեանին, ուսուցիչ Յ. Շիրվանեանին, Ն. Բէգլարեանին, Ա. Զախարեանին և Մ. Առստամեանին։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ աւագ տանուտէր Դ. Աւագեան, Ա. Տօնեան և Մ. Ալլահվերդեան։

Ս. Տ.-Յարութիւնեանց

„БАКУ" ԼՐԱԳՐԻ ՍԽԱԼԸ

„Баку" լրագիրը իր 158-րդ համարում մի քանի տեղեկութիւններ է հաղորդում հայոց կաթողիկոսների մասին, բայց բոլոր տեղեկութիւնները սխալ են և վայրիվերոյ։ Յօդուածագիրը ասում է, թէ հայոց կաթողիկոսներից Գէորգ Դ. միայն լաւ ռուսերէն գիտէր, իսկ Ներսէսը և Մակարը բոլորովին չը գիտէին։

Զարմանալի է, որ այդ լրագրի հրատարակութեան վարիչները, որոնք շատ են սիրում հանդէս գալ հայ ազգի ղեկավարի դերում, մեր ամենամօտիկ անցեալի մասին իրանց լրագրի մէջ սխալ տեղեկութիւններ են տարածում օտարների մէջ։ Յայտնի է, որ հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը մի խօսք անգամ չը գիտէր ռուսերէն, իսկ Ներսէսը խօսում էր, Մակարն էլ մի փոքր հասկանում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բօրժօմի պօստը կողոպտելու մասին հաղորդվում են և հետևեալ մանրամասնութիւնները։ Սեպտ. 1-ին Ախալցխա էր գնում Բօրժօմի պօստը և տանում էր 45,381 րուբլի։ Ֆուրգօնին ուղեկցում էին հինգ կօզակներ և 2 հետևակ պահակներ։ Բօրժօմից 13 վերստ հեռաւորութեան վրա նրանց վրա անյայտ մարդիկ նետեցին երեք թոյլ ույժի ռումբեր և ապա կրակ բացին հրացաններից։ Պօստատար Իվանիշը և կառապանը, կտրելով գնդակահարված ձիու սանձը, պօստը անվտանգ առաջ քշեցին։ Ճանապարհին պօստին հանդիպեցին 4 կօզակներ ուրեադնիկի առաջնորդութեամբ, որոնք և ուղեկցեցին նրան մինչև Ախալցխա։ Սպանվել են 3 կօզակներ, 1 վիրաւորվել, մէկին էլ անգիտակից դրութեան մէջ հանել են Կուր գետից. պահակներից մինը դեռ չէ գտնված։ Սպանված է աւազակներից մինը, որի մօտ գտնվել է Թիֆլիսի բնակիչ Բէրօձաշվիլու անունով անցաթուղթ։

◆ Կովկասագիտական բարձր դասընթացքներում դասախօսութիւններ են կարդալու այս ուսումնական տարում հետևեալ անձինք՝ Ա. Դիրր՝ «Կովկասեան լեզուների համեմատական չափը», դօցենտ Բ. Խալաթեան՝ «Առաջաւոր Ասիայի պատմութիւնը», Իւ. Աբուլաձէ՝ «Վրաց լեզուի ծագումը և վրաց գրականութեան վերածնութեան զարգացումը», Ս. Լիսիցեան՝ «Հայոց պատմութիւն» և Մ. Բերբերեան՝ «Հայկական նորագոյն գրականութիւն»։

◆ Պաշտօնից արձակվում է, խնդրագրի համաձայն, մամուլի գրաքննիչ ատեանի գլխաւոր անդամ Քիշմիշեանը։

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը թոյլատրել է Վլադիկավկազ քաղաքի հասարակական ինքնավարութեան՝ 200,000 րուբլու փոխառութիւն կնքել 2-րդ րէալական դպրոցի և միւս դպրոցների համար շինութիւններ կառուցանելու համար։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան գանձարկղի ստուգութիւնը դեռ շարունակվում է։

◆ Սօլօլակի տունելի աշխատանքները շտապով առաջ են գնում։ Մնում է փորել դարձեալ 22 սաժէն։

◆ Սեպտեմբերի 2-ից Թիֆլիսում վրացերէն լեզուով հրատարակվում է նոր օրաթերթ «Սալղուլը» անունով։

◆ „Кавказ" պաշտօնական թերթում տպված է. „Гол. Кав."-ի օգ. 15 ի համարում մի յօդուած է զետեղված «Կովկասի ռուսները զգացնել մի պատկեր» վերնագրով։ Այդ յօդուածում [illegible] է յայտնվում, «որ բարձր իշխանութիւնը հայկական Ջալալօղլի գիւղերը բերել նոզել տալու է հողաբաժիններ՝ մերժելով ռուսներին։ Այդ առիթով Փոխարքայի դիւանատունը իր պարտքն է համարում յայտնել, որ Լալվերի հողաբաժին կոչված տեղը բերել նոզել տալու հարցը Փոխարքայի խորհրդին առաջարկել է միայն ինքը, և որ, այդ պատճառով, „Гол. Кав."-ի դատողութիւնը այդ առարկայի նկատմամբ վաղաժամ է ներկայանում»։

◆ Մեզ հաղորդում են, որ Փայլանեան օրիորդական դպրոցի հոգաբարձութիւնը, քննելով այն հարցը, թէ հարկաւո՞ր է յետաձգել ուսումը մի քանի օրով, ինչպէս արել են Ներսիսեան և Յովնանեան դպրոցների վարչութիւնները, պատճառ բերելով խոլերան, չէ գտել ոչ մի հիմնական պատճառ յետաձգել և որոշել է անընդհատ շարունակել ուսումը, ի նկատի ունենալով որ թէ պետական և թէ քաղաքային դպրոցներում արդէն սկսվել է կանոնաւոր պարապմունքը։

◆ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետի կարգադրութեամբ թիֆլիսեցի Ալէքսանդր Վասիլչենկօն և ալէքսանդրօպօլցի Հայկ Յարութիւնեանը, իբրև վտանգաւոր անձինք հասարակական հանգստութեան համար, ենթարկվում են 2 ամսով բանտարկութեան, իսկ յետոյ աքսորվում են գեներալ-նահանգապետութեան սահմաններից, առաջինը 3, երկրորդը 1 տարով։

◆ Մեզ խնդրում են հաղորդել, որ ամեն օր շատ թիւրքահայեր շարունակ դիմում են Թիւրքահայերի ժողովում ընտրված բիւրօյի անդամներին, խնդրելով իրանց ձրի անցաթղթեր տալ հայրենիք վերադառնալու համար։ Մինչդեռ մինչև օրս կառավարութիւնից չը ստացվեց պաշտօնական կարգադրութիւն լեգալ ճանաչել այդ բիւրօն։ Խօսում են նաև, որ հազիւ թէ բիւրօն հաստատվի, քանի որ կառավարութիւնը մատնանշում է արդէն հաստատված լեգալ մարմնի՝ այսինքն Թիւրքահայերի հանգանակիչ մասնաժողովի վրա, որը և, նրա կարծիքով, պէտք է կազմակերպէ վերադարձի գործը։

◆ Ղզլարի քաղաքագլուխը Վլադիկավկազի երկաթուղիների կառավարչի առաջ միջնորդութիւն է յարուցել, որ՝ Ղզլարի միջով երկաթուղի անցնի։ Բացի դրանից, Վլադիկավկազի երկ. վարչութիւնը Տերեկի շրջանի ատամանից մի գրութիւն է ստացել, որով ատամանը շեշտում է այն մեծ նշանակութիւնը, որ կը ստանայ ոչ միայն Ղզլարը, այլև նրա ամբողջ շրջակայքը, եթէ երկաթուղի կառուցվի։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սեպտեմբերի 3-ին, Իերուսալիմսկայա փողոցում, № 5 տանը, Ախալցխայի բնակչի որդի Բոսեկ Շատաշվիլին, իր բնակարանի պատշգամբում խաղալու ժամանակ, վայր ընկաւ փողոց և ամբողջ մարմինը ջարդեց։ Նրան տարան հիւանդանոց և բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ տուն ուղարկեցին, բայց նա տանը մեռաւ։

◆ Սեպտեմբերի 2-ին, Սէյդաբադսկի փողոցում, մի անյայտ մարդ ատրճանակով վիրաւորեց տուն վերադարձող Եփրեմ Չիկվաիձէին գլխից։ Վիրաւորվածը ճանապարհին մեռաւ։ Կասկածով ձերբակալված է տեղական բնակիչ Գէորգ Խաչատրեանը (նա ինքը Օհանով)։

◆ Սեպտեմբերի 3-ին հրշէջների գերեզմանատանը գտել են պարանոցից և ձեռքից վիրաւորված Հասան-Միրզա-Մուժալի-օղլու կին Նաժաժին։ Վերջինս յայտնել է, որ իրան բերեց իր մարդը հրշէջների գերեզմանատան ետևը և այնտեղ վիրաւորեց։ Միջոցներ են ձեռք առնված յանցաւորին բռնելու։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը աւարտել է միջնակարգ դպրոցները բարեփոխութեան նախագծի մշակումը։ Դրա հիման վրա մտադրութիւն կայ ուսուցիչների ռոճիկները աւելացնելու նպատակով խնդրել 10,000,000 րուբլու կրեդիտ։ Որոշված է աւելացնել նոր լեզուների դասաւանդութեան ծրագիրը, և խրախուսել ամեն տեսակ խելացի խաղերը աշակերտների կազմուածքն ու մկանունքները զարգացնելու նպատակով։

◆ Լուր է պտտում, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան խորհրդի անդամ Դեբօլսկու կողմից Պետերբուրգի համալսարանը այցելելուց յետոյ՝ կարելի է յուսալ, որ ազատ ունկնդրուհիների հարցը նպաստաւոր լուծումն կը ստանայ մինիստրների խորհրդի մէջ։

◆ Ինչպէս հաղորդել էինք, պրօֆեսօր Պետրաժիցկուն առաջարկված էր կամ ստորագրութիւն տալ կադետների կուսակցութիւնից դուրս գալու համար և կամ հրաժարական տալ։ Այժմ «Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Պետրաժիցկին հրաժարվում է և առաջարկութիւն է ստացել ստանձնել ամբիոն եւրօպական ամենահին համալսարաններից մէկում՝ Օկսֆորդի համալսարանում։

◆ Ներկայումս բանտերում քաղաքական գործերի համար նստած են 200 ից աւելի անչափահաս մեղադրեալներ, որոնց թւում կան 15 և 16 տարեկան գիմնազիստ ու գիմնազիստուհիներ։

◆ Սենատը նահանգապետների կողմից արված այն հարցին, թէ արհեստակցական միութիւնները իրաւունք ունե՞ն, արդեօք, նպաստներ բաժանել իրանց անդամներին, բացատրել է, որ խաղաղ ընթացող գործադուլները պատժի չեն ենթարկվում, ուստի և այդ կազմակերպութիւնների անդամներին յատուկ կօմիտէտի կողմից գործադուլի ժամանակ տրվող նպաստները չեն կարող համարվել յանցաւոր գործողութիւն։

(«Бирж. Вѣд.»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 12 օգոստոսի

«Մշակ» լրագրի № 134-ում այրի տ. Աննա Մանուկեանը յայտարարում է, թէ նա գաւառական վարժուհի լինելով, 12 տարվայ այրի կին, կարողացել է իր սուղ միջոցներով կրթութիւն տալ իր հինգ որբ զաւակներին, որոնցից մեծը այս տարի աւարտելով գիմնազիան, ի սրտէ փափագում է շարունակել ուսումը, ուստի խնդրում է բարերար անձանց օգնել՝ ով ինչքան կարող է՝ մտցնել նրան համալսարան, որը աւարտելով լինելու է այդ բազմանդամ ընտանիքի կառավարողը։

Ճշմարտութիւնը իրեան հանելու նպատակով անհրաժեշտ պարտականութիւնս եմ համարում յայտնել խմբագրութեանդ, որ տ. Աննա Մանուկեանը մեծ յանցանք է գործում իր ստութեամբ դիմելով բարերար անձանց օգնութեան իր մեծ զաւակին համալսարան մտցնելու մասին։

Նախ՝ նա կոչում է իրան 12 տարվայ այրի կին այն ժամանակ, երբ իր ամուսինը վախճանվել է 1905 թ., ուրեմն նա այրի կին է երրորդ տարվայ։ Երկրորդ՝ ասում է, որ սուղ միջոցներով կրթել է իր հինգ զաւակները. ես ինքս ամեն կերպ աշխատել եմ և հոգացել թէ ուսման վարձը և թէ նրա զաւակների կրթութիւնը։ 1906 թ., դուրս բերվելով Օբօյեանի խանութից և յետոյ պրաչեչնիայից, որ գտնվում էին Թիֆլիսի Պուշկինեան պասսաժում, որտեղ ծառայում էր տ. Ա. Մանուկեանը՝ առաջինում իբրև պրիկաշչիցա (1902 թ.), իսկ երկրորդում իբրև կանտօրշչիցա (1903 թ.), իմ շնորհիւ և մեծ աշխատութեամբ ստացել է հայոց լեզուի վարժուհու ցենզ. իմ խնդրանօք պ. Լևոն Սարգսեանից նշանակվեց Ծղնա գիւղի վարժուհի, տանելով իր հետ օր. Ա. Ալավ...-ին նոյնպէս իբրև վարժուհի, որը այժմ այդ գիմնազիաւարտ որդու նշանածն է։ Այս երկուսը, այսինքն հարս ու սկեսուր, ստացել են 1000 ր., ուրեմն շատ հաւանական է, որ տ. Մանուկեանը և իր հարսնացուն հեշտութեամբ կարող են մտցնել նրան իրանց փողով համալսարան։ Բացի այդ ռոճիկներից (1000 ր. տարեկան), որ ստանում են տ. Մանուկեանը և օր. Ա. Ալավ..., տ. Մանուկեանը ունի երկու քարուկրեայ սեփական տուն Հավլաբար կոչված քաղաքի VII մասում։ Հէնց այդ երկու տան քրէններով միայն նա հեշտութեամբ կարող է մտցնել իր զաւակը համալսարան և միւս զաւակների ուսման վարձը ճշտութեամբ վճարել՝ թէ Ներսիսեան ուսումնարանում Վարդան զաւակի համար և թէ իր օր. Արմէնուհու ուսման վարձը Մարիամեան-Յովնանեան ուսումնարանում։

Տ. Սայեաթ-Նովա

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՑ

◆ Յայտարարութիւն հայրենասիրական-մարդասիրական նորակազմ ընկերութեան.— Հայ կաթոլիկ երիտասարդներէն Մ. Սերոբեան էֆ.-ի հրապարակային հրաւէրին վրայ, աթոռանիստ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն բակը հաւաքում մը տեղի ունեցաւ, ուր կազմուեցաւ «Հայրենասիրական-մարդասիրական ընկեր.» անուամբ ակումբ մը, որ իրեն կէտ նպատակ առաջադրած է, հայ կաթոլիկ յետամնաց դասակարգին մտաւորական զարգացումը մշակելով, յառաջացնելով և բարի տրամադրութիւններով արգասաւորելով կազմել ընդհ. հայութեան օգտակար տարր մը, ամեն երկպառակութիւն, ամեն սխալ հասկցողութիւն ու թիւրիմացութիւն մէջտեղէն բառնալ, ամեն միջոց ի գործ դնել հայ անունը, հայ զգացումը, վեհ ու նուիրական, [illegible] նկատուած, ամեն բռնաբարումէ զերծ պահելու կարող անդամներ հասցնել։

Այս սուրբ նպատակին իրագործման աշխատելու համար կազմուելիք մնայուն դիւանը որոշելու, ընդհ. ժողով մը գումարելու և այս նուիրական գործը ըստ արժանւոյն և ըստ կարելւոյն տարածելու նպատակաւ առժամեայ միամսեայ դիւան մը ընտրուած է, հոն եկեղեցւոյն շրջաբակը գտնուողներուն մէջէն միաձայն հաւանութեամբ, ատենապետութեամբ Մելքոն էֆ. Սերոբեանի, իրեն օժանդակ ունենալով Էմմանուէլ Բաբաեան, Յովսէփ Թօփալեան, Թ. Կ. Նիկողոսեան, Ն. Խերեան, Ա. Շեքերճեան և Կ. Հոլասեան էֆ.-ները։ («Արևելք»)

◆ Ալի Հայդար Միդհաթ բէյ.—Միդհաթ բէյ, որ շատ տարիներէ ի վեր իր հայրենիքէն հեռու տարագրուած էր, Պարիզէն հետևեալ հեռագիրը ղրկած է «Նոյե Ֆրայե Պրեսսե»-ի.

«Երկու օրէն Կ. Պոլիս կը դառնամ։ Հիմա որ սահմանադրութիւնը վերահաստատուեցաւ և Թիւրքիա բաց է, քանի որ հօրս իղձերը և իմ անձնական արժանապատւութեանս առարկայ եղող խնդիրը իրականացաւ, երջանիկ կը զգամ ինքզինքս հայրենիք վերադառնալ կարենալուս համար 27 տարուան աքսորէ ետքը, որուն ինը տարին օտար երկրի մէջ անցուցի։ Այսօր կը խոստանամ ընել ինչ-որ վեհ. սուլթանին կրկնած եմ յաճախ՝ այսինքն մոռնալ ցաւագին անցեալը, եթէ ազգը կը փափաքի առաջ։ Ես ալ նոյնը պիտի ընեմ ազգիս պէս, որ ինքզինքը ուրախ և շնորհապարտ կը զգայ իր իրաւունքներուն վերահաստատուելուն համար, և կը կարծեմ թէ սահմանադրութեան հաւատարիմ գտնուած չպիտի ըլլամ, եթէ սահմանադրական վեհապետին հանդէպ հաւատարիմ չգտնուիմ։ Ես առանց երկուքն ալ իրարմէ անբաժան կը հաւատամ։ Կը ցաւիմ որ հակառակ փափաքիս, չպիտի կրնամ Վիէննա մնալ։ Մօտերս վերստին Արևմուտք պիտի դառնամ, ուր կը կարծեմ թէ օգտակար կերպով պիտի աշխատեմ հայրենիքիս համար։ Այնտեղեն մէկ քանի օր Վիէննա պիտի անցընեմ»։ («Արեւելք»)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Կահիրէից ստացված տեղեկութիւններին նայելով, բոլոր արաբերէն լեզուով այնտեղ լոյս տեսնող թերթերի կողմից սուլթան Աբդիւլ-Համիդին հեռագիր է ուղարկված, խնդրելով, որ նա խեդիվին յանձնարարի Եգիպտոսում սահմանադրութիւն մտցնել։

Լօնդօնի «Daily Graphic» թերթը, որ շատ մօտ է Ասկվիտի մինիստրութեանը, այդ առիթով նկատում է, որ սուլթան Աբդիւլ Համիդը ներկայումս բաւականին հոգսեր ու գործեր ունի, ուստի հազիւ թէ նա կը շտապի իր վասալներին յայտնելու՝ «Շատ ուրախ եմ, ուրախութեամբ ձեզ սահմանադրութիւն եմ տալիս»։

«Եթէ միայն սուլթանը այն աստիճան անհեռատես գտնվի,—ասում է թերթը,—որ կատարի եգիպտական նացիօնալիստների ցանկութիւնը, այնուամենայնիւ այս վերջինները չը պէտք է մոռանան, որ Եգիպտոսի տէր-իշխանը իրաւունք չունի ոչ մի բան անել, առանց իր անգլիական խորհրդականի կարծիքը իմանալու։ Պարզ է, որ եգիպտական նացիօնալիստները ցանկանում են Թիւրքիայի դէպքերից օգտվել բացառապէս նրա համար միայն, որպէսզի դժուարութիւններ յարուցանեն անգլիացիների համար։ Սակայն, Եգիպտոսում սահմանադրութիւն մտցնելու գաղափարը ինքնըստինքեան Անգլիայում աւելի շատ վստահելի բարեկամներ ունի, քան սուլթան Աբդիւլ-Համիդը։ Դեռ 1883 թւականին Եգիպտոսը, բոլորովին ոչ սուլթանի ցանկութեամբ, ստացաւ օրէնսդրական խորհուրդ, ընդհանուր ազգային ժողով և ինքնուրոյն նահանգական հաստատութիւններ։ Մինչև հիմա էլ այդ հաստատութիւնները գոյութիւն ունեն և նրանց իրաւունքների սահմանները աւելի լայնացված կը լինէին, եթէ եգիպտացիք այդ աստիճան հասունացած լինէին։ Ճշմարտութիւնն այն է, որ բրիտանական կօմիսար լորդ Կրօմերը այն համոզման է եկել, որ ֆիլահները ընդհանրապէս շատ քիչ են հետաքրքրվում ներկայացուցչական հաստատութիւններով, իսկ ղպտիները մինչև իսկ ուղղակի հակառակ են այդ հաստատութիւններին։ Իսկ ինչ վերաբերում է ինտելիգենտ և ողջամիտ եգիպտացիներին, նրանց համար էլ շատ պարզ է, որ ինքնավարութիւն ստանալու համար բոլորովին կարիք չը կայ Կ. Պոլիս դիմելու»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

2 օգոստոսի

ՍԱՐԱՏՕՎ։ Ատկարսկի գաւառում, Դուբասովկի մօտ, զինված յարձակում է գործված արքունական գինու պահեստների դրամատարի վրա։ Դրամատարը սպանված է, կառապանը վիրաւորված. 1700 րուբլի տարված է։

ԲԱԽՄՈՒՏ։ Սօֆիեվի հանքում պայթումից սպանվեց մի բանւոր։ Հնար եղաւ ազատել երեքին։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Ձերբակալվեցին տեղական սօցիալ-դեմօկրատական կազմակերպութեան անդամները, որոնց մօտ գտնվեցին 600 հատ թռուցիկներ։

ՄԱՐՍԷՅԼ։ Սեպտեմբերի 1-ին օտարազգի պետութիւնների 11 ներկայացուցիչների ներկայութեամբ բացվեց ելեքտրականութեան միջազգային համագումարը։

Ժամ. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի ներքին և ներվային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ց. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—5½—6½ ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ.,

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24/4)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն հաշւիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումը)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ

Քննութիւնների սկիզբը սեպտեմբերի 15 ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7։

Համառօտ ծրագիրը և կանօնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ
(ա. օ.) 20—1

Ա. ՓՈՐՍՈՒՂԵԱՆ

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ	Ա. տարի . . .	25 կ.
» » » »	Բ. » (հիմն. բարեփոխված)	25 »
» » » »	Գ. » (հիմն. բարեփոխված)	25 »

Այս դասագրքերը կազմված են կենտրոնական ժողովում ընդունած ծրագրի համաձայն։ Բարեփոխութեան ենթարկված՝ փորձված ուսուցիչների ցուցմունքով։ Ընդունելութիւն են գտել շատ աչքի ընկնող դպրոցներում, պետական և ծխական։

Գլխաւոր պահեստները՝
Կազմողի մօտ—Карсъ, А. Порсугянъ.
Թիֆլիսում—«ԳՈՒՏԵՆԲԵՐԳ», կենտրոնական և «Փարոս» գրախանութներում։
Ախալքալաք—Տօնական Տօնականեանի մօտ։
Ալէքսանդրօպոլ—Գէորգ Ստեփանեանի մօտ։
Գրավաճառներին ձեռնտու պայմաններ։ 10—6

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Լիակատար բժշկութիւն ՍԻՖԻԼԻՍԻ և նրա հետևանքների
Ի. Ավրախովի ՈՂԱՆԱԿՈՎ

Որպէս բժշկվել սիֆիլիսից բոլոր շրջաններում և ձևերում նրա հետևանքներից, այսինքն կաթուածներ, տաքէս, ոսկրացաւ, բծեր, վէրքեր և այլն, նոյնպէս խլացաւ և էկզէմա։

Բժշկութիւն առանց սնդիկի և եօդի անվնաս բուսական բալզամով։

Կատարեալ բժշկութիւն 2—4 շաբաթում առանց վերադարձների։ Բրօշիւրը ուղարկվում է երեք 7 կոպէկանոց մարկաներ ուղարկելուց։ Շատ կան նոտարով վաւերացրած շնորհակալութիւններ և բժիշկների վկայականներ։

Հեղինակի մօտ կարելի է ստանալ ձրի՝ С.-Петербургъ, Колокольная ул., №1 1, собств. домъ.

ՀՆԴԿԱԿԱՆ ԲԱԼԶԱՄ է միմիայն ծախվում Դ. ԱՎՐԱԽՕՎԻ մօտ СПБ. Колокольная ул., № 11,
(հ. ե.) 00—19

ՍԻՖԻԼԻՍԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

Սովորեցնում և պատրաստում են
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1908 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул., № 22, ամեն օր։ Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ 20—16
(կ. ե. հ.)

ԺԱՄԱՑՈՅՑ KAVALIER

Ընդառաջելով գնողների ցանկութեան՝ ունենալ ճիշտ և իսկական ժամացոյց էժան գնով, մենք վճռեցինք տալ 3 ր. 95 կ.-ով տղամարդկանց բաց տափակ ժամացոյց «KAVALIER», վերջին կատարելագործութիւններով ժամացոյցային մեխանիզմի մէջ։ Կորպուսը փայլուն մուգ կապոյտ գոյնի է։ Ցիֆերբլատը մետաղական ոսկեզօծված կամ արծաթազօծված։ Սլաքների ուղղութիւնը՝ գլխի վրա։ Ընթացքը՝ խնամքով ստուգված, որի մասին տրվում է երաշխաւորութիւն։

Պատուէրները կատարվում են անմիջապէս պահանջը ստանալուց յետոյ։

Առաքման համար վերցվում է գնողներից { Եւրոպական Ռուսաստան 50 կոպ. / իսկ Ասիական » 75 կոպ.

Պատուէրներն ուղարկել՝ Торговому дому
Московскій Центральный Складъ Часовъ.
Москва, д. Виноградова № 126.

Ց. Գ.—Կանխավճար ուղարկողներին, դրամով կամ մարկաներով, ձրի տրվում է ժամացոյցի շղթայ տղամարդի կամ կնոջ։
(հ. կ.) 30—13

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ

կարդալ, գրել և խօսել սովորեցնում են 8 ամսում տեսական և գործնական պարապմունքների միջոցով. ամսական 5 ր.։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր 10—12 և 4—7 ժամը.։

Միքայէլեան պրօսպ., տուն № 24/4
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութ. կանդիդատ՝ Տ. ՓԻԼՈՅԵԱՆ
(օ. մ.) 20—2

Զուիթակահարութեան
ԴԱՍԵՐ
Մ. Վ. Վասիլևվի

Պարապմունքների սկիզբը՝ սեպտ. 1-ին, վախճանը՝ յունիսի 1-ին։ Ուսումն. տարվայ վճարը՝ 90 րուբլի երկու նուագով։ Ընդունելութիւնը օգոստոսի 30-ից ամեն օր, առ. ժամը 10—1 և երեկ. ժամը 5—7½։

Գրիբօեդովսկայա փող. № 5.
(օգ. 26,28,31, սեպ. 2,4,7) 6—5

ՈՒՍՈՒՑԻՉ

ընտանիքաւոր, ցանկանում է վերցնել 2 կամ 3 տղայ կամ աղջիկ, լիակատար կերպով իր մօտ ապրելու, դասերի կրկնութեամբ կամ պատրաստելով։ Վճարը չափաւոր է։

Հասցէն՝ Близъ 3 муж. и женс. гимн. Бебутовская 44, верхній этажъ, спросить учителя.
(կ. ե. հ.) 4—3

Մ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
уголъ Бебутовской и Веляминовск., № 19.

Աշակերտուհիներ և կանանց շորերի ու ձեռագործների պատուէրներ ընդունում են օգոստոսի 25 ից։

Պարապմունքները սկսվում են սեպտեմբերի 1-ից։

Նոյն տեղը ընդունվում են և գիշերօթիկներ։ 3—2
(30, 4, 7)

УГОЛЬ
КУЗНЕЧНЫЙ, ПАРОВИЧНЫЙ, ПЛАМЕН., АНТРАЦИТЪ, КОКСЪ.
ЦѢНЫ ОПТОВЫЯ.
А. БРАУХЛИ, Харьковъ.
52—7

ԱԽԱԼՑԽԱՅԻ

հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն խնդրատու ուսուցիչների, որ ուսուցչական խումբը կազմված է։ Պատասխան չը ստացող ուսուցիչները ազատ են։ 3—3
(ա. օ.)

1860
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ.
ТОВАРИЩ. РОСС.-АМЕРИКАНСК. РЕЗИН. МАНУФ.
RUSSIAN AMERICAN INDIA RUBBER

1865 թ. 1870 թ. 1882 թ. 1896 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

1860.
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ.

Իսկականները միայն այս դրոշմով

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՌԵԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ
ԸՆԿ. Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

ԼՐԻՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

լաւ յատկութեան համար

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ՎԻԼՆԱՅՈՒՄ

ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԷՆՏՈՒՄ
ՍԱՐԱՏՕՎՈՒՄ
ՊԵՐՄՈՒՄ

Նիժեգորոդեան և Իրբիտեան տօնավաճառներում
50—9
(հ. կ.)

Типографія „Экономія“ Ав. Му[illegible]іакопова